Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Գետափի Գ Արշակյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Պատմություն >> (5 դասաժամ) և << Հասարակագիտություն >> (1 դասաժամ),) , ուսուցչի թափուր տեղի համար։ Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։

Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայկացնել՝

1)դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3 x4 չափի,

2)Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ/,

3)անձը հաստատող փաստաթուղթ,

4)<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/,

5)Ինքնակենսագրություն /Ձև5/

6)այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ։

7)ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8)Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում/,

9)Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

10)Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ-ի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն(մասնակցած լինելու դեպքում)։

11)<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ն կետի (առկայության դեպքում նաև 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ։

12)<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն անբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերը ընդունվում են սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ ,ամեն օր՝ ժամը 10:00- 15:00 , բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 6-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի <<Գետափի Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում , հասցեն գ. Գետափ 1-ին փ,4-րդ փկղ շենք

Տեղեկությունների համար զանգահարել՝ /077/ 055-602 հեռախոսահամարով։

Տնօրեն՝ Ռ. Արաջյան

10.09.2025թ